Հանդիպման ընթացքում խոսվեց հայ-ուկրաինական հարաբերությունների եւ մշակութային կապերի զարգացման մասին, ինչպես նաեւ Ուկրաինայի հայ համայնքի եւ նրա կարեւոր դերակատարության մասին երկրի կյանքի տարբեր ոլորտներում: Անդրադարձ կատարվեց նաեւ երկու երկրների հոգեւոր կյանքին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ-ՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Նոյեմբերի 22-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Անրի Ռենոյին:

Նորին Սրբությունն անդրադարձավ այն կարեւոր ծառայությանը, որ դեսպանատունը կատարում է երկու բարեկամ երկրների հարաբերությունների սերտացման, զորացման եւ հետագա զարգացման համար: Հայոց Հայրապետը երախտագիտությամբ խոսեց նաեւ հայ ժողովրդի հանդեպ Ֆրանսիայի առանձնահատուկ վերաբերմունքի մասին՝ ի մասնավորի անդրադառնալով Ֆրանսիայի վճռական կեցվածքին Հայոց Ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման հարցում:

Իր հերթին պրն. Ռենոն նշեց, որ Հայոց Եկեղեցին հայ ժողովրդի ինքնության հզոր տարրերից մեկն է, որի զորեղ ուժով եւ դարավոր մաքառումների գնով է պայմանավորված հայ ազգի գոյությունը:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ Եկեղեցու առջեւ ծառացած ներկայիս մարտահրավերներին եւ դրանց հաղթահարման ուղիներին, Ֆրանսիայի հայոց թեմին եւ հայ համայնքի կյանքին:

Զրույցի ավարտին Վեհափառ Հայրապետը դեսպանին մաղթեց բարի առաքելություն Հայաստանում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## «ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿԻՆ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ԵՒ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԱՑԻԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Նոյեմբերի 24-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Բարի գալուստ Հայաստան» կին դիվանագետների եւ դիվանագետների կանանց ընկերակցության անդամներին՝ գլխավորությամբ ընկերակցության նախագահ տիկ. Նատալիա Նալբանդյանի:



Ֆրանսիայի դեսպանը վեհարանում